

## ԳԼՈՒԽ I

### ԹԱՂԱԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ԱԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՐԱԿԳԾԵՐ ԵՎ ԴՐԱՆՅ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍԳՈ ԵՐԳԵՐՈՒՄ

Թաղման ծեսը, կապվելով կյանքի եռամաս-  
նյա կադապարի վերջին օդակին, մարդկության  
պատմության բոլոր փուլերում, բոլոր ժողո-  
վուրդների համար եղել է կենցաղային ամենա-  
սարողունակ սովորություններից մեկը: Այն ե-  
կել է հազարամյակների խորքից, ժամանակ-  
ների առաջարժուքիս ընթացքի համաձայն  
կրելով բազմապիսի փոփոխություններ՝ համա-  
պատասխանելով ժողովրդի աշխարհայացքի,  
ըմբռնումների, կենցաղի հոլովության, երբեք,  
սակայն չկորցնելով իր մեծ դերն ու ազդեցու-  
թյունը մարդկային կյանքի, հոգեբանության ու  
մտածելակերպի վրա:

Թաղման վաղնջական սովորությունների մա-  
սին տեղեկություններ են հաղորդում նյութա-  
կան մշակույթի այլևայլ դրսևորումների մեզ հա-  
սած մասունքները՝ ժայռապատկերներ, քան-  
դակներ, սեպագիր արձանագրություններ, ճար-  
տարապետական հուշարձաններ և, իհարկե, ա-  
ռաջին հերթին հայտնաբերված բազում դամ-  
բանադաշտերն ու զերեզմանները: Սբանց պե-  
ղումները պատկերացում են տալիս հնագույն  
կենցաղի ու բարքի մասին ընդհանրապես:

Մարդը մահացած մերձավորին թողնում էր  
իր մշտական բնակավայրում՝ քաբանձավում  
կամ կողքի քարայրում, բայց եետզհետե անց-  
նում է նրա համար այլ, առանձին բնակարան  
պատրաստելու գաղափարին:

Թաղման բոլոր ձևերը՝ քարարկղային, սա-  
լարկղային, հիմնահողային, կարասային, կավե  
ու փայտե դագաղային, գալիս են համոզելու  
մեզ, որ մահացածին երբեք չէին համարում  
կյանքից վերջնականապես հեռացած: Գտնում

էին, որ նա շարունակելու է ապրել այլ ձևով,  
այլ աշխարհում:

Քնի ու մաեվսն նմանությունից և երագի,  
տեսիլների անըմբռնելիություններից են ծագել  
հոգեպաշտական պատկերացումները: Մարդուն  
զբաղեցնում էին մի շարք առանցքային հար-  
ցեր. ո՞րն է մեռած և կենդանի մարմինների տար-  
բերությունը, որո՞նք են երագի, մտապատրան-  
քի, հիվանդության և մահվան պատճառները,  
ի՞նչ են իրենցից ներկայացնում երագներում և  
տեսիլներում հայտնվող մարմնաձևերը: Եթե  
քնած մարդը՝ արթմնի մարդկանց համար ան-  
տեսանելի, անորսալի գործողությունների ըն-  
դունակ է, և քնի պահին, այս աշխարհի համար  
անշարժ ու անխոս, խոսում, զգում ու զործում է  
այլ՝ վերերկրային կամ անդերկրային ոլորտնե-  
րում, ուրեմն նա բաղկացած է երկու «ես»-ից՝  
իրական և ուրվական՝ հոգուց և մարմնից: Հե-  
տևաբար մահացածն էլ, որին երկրորդ «ես»-ը  
լքել է ոչ թե ժամանակավորապես, այլ ընդմիշտ  
(կամ շատ երկար ժամանակով) կենդանի մարդ-  
կանց համար աննկատ շարունակում է իր գո-  
յությունը: Եվ քանի որ երագը իրական կյանքի  
ճիշտ պատճենն է, ապա մեռածը ևս կունենա  
այն բոլոր իրերի և առարկաների կարիքը, որ  
ունեն կենդանի մարդիկ: Այս իսկ տրամաբա-  
նությանը ձգտում էին նրան ապահովել բոլոր  
պիտույքներով՝ սնվելու, աշխատելու, ժաման-  
ցի, հարդարանքի առարկաներով կահ-կարա-  
սիով, հագուստեղենով, մեծ քանակի սննդա-  
մթերքով և անգամ ընտանի կենդանիների ու  
մերձավոր մարդկանց ընկերակցությամբ: Այս  
իրողությունն են հաստատում զերեզմանների

րագմամյա պեղումներն ու զրալոր աղբյուրները:

Բնական է, որ որքան քաղաքակրթությամբ քիչ է մոտենում մարդը, այնքան նրա մոտ ուժեղ են նախնական պատկերացումները: Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի, Հնդկաստանի շատ ժողովուրդներ մինչև այժմ պահպանում են մեռած թագավորներին, առաջնորդներին ու զորապետներին ընծաներ, թանկագին իրեր ու հագուստներ նվիրելու սովորությունը: 20-րդ դարի սկզբներին սրանց դամբարանները դեռևս հաճախ բաղկացած էին լինում մի քանի սենյակներից, որպեսզի տեղավորեն այդ ամբողջը<sup>1</sup>:

Թաղման ծեսի բուն խնդիրն էր սիրաշահել, գոհացնել հանգուցյալի հոգուն: Ինչպես չհասկացվող, անբացատրելի, մանավանդ զորեղ, անդիմադրելի և անհաղթելի յուրաքանչյուր երևույթի, այնպես էլ մահվան ու հանգուցյալի հանդեպ մարդը երկյուղ էր տածում: Վախենում էր, որ ամեն ինչ տեսնող ու լսող հոգին դժգոհ կմնա և վրեժխնդիր կլինի: Եվ, հետո, մարդը սիրում ու խղճում էր իրենից ընդերկարս (գուցե և հավիտյան) բաժանվող մերձավորին և իր հոգու ու խղճի պարտքն էր համարում անել նրա համար հնարավորը<sup>2</sup>:

Հազարամյակներ շարունակ զանազան կերպ էին վարվում հանգուցյալի հետ. մոմիաներ էին պատրաստում, թաղում կամ հրկիզում էին, հիմնականում ցուցաբերելով երկու տարբեր մոտեցումներ՝ պահպանել կամ ոչնչացնել, բայց երբեք անուշադրության չէին մատնում: Վերջապես առաջին աստվածները ոչ այլ ոք էին, քան հանգուցյալ հեղինակություններ՝ Հայկ, Արա, Վահագն, Տորք... Նրանց պաշտում էին, գոհեր

մատուցում, երկրպագում, ապավինում նրանց զորությանը: Ոչնչից չեն ստեղծվել կուռքերը, այլ քաջ զորապետի, ցեղի առաջնորդի, արի որսորդի, մեծահոգի ու շնալ տիրուհու հիշատակներից, որոնք ծովվելով բնության այս կամ այն երևույթին, դարձել են զերիզոր կարողությունների մարմնացումներ: Կենդանի մարդը՝ ունենալով իր աստվածները, պահապան զորությունները, հոգացել է նաև մեռյալների համար, ստեղծել նրանց աստվածը ևս (Սանդարամետ կամ Սպանդարամետ, Հադես, Նարգիլ, Սերասիս, Թամատոս և այլն):

Ղ. Ալիշանը *սանդար* բացատրում է որպես խոր վիհ, անդունդ<sup>3</sup>: Սպանդարամետը հիշվում է Ագաթանգեղոսի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և այլոց երկերում: Ե. Դուրյանի կարծիքով՝ Սպանդարամետը առաքինի կնոջ տիպար էր մագդեական կրոնի մեջ, որ ներկայացնում էր երկրի ոգին և զընթե մույն նշանակությամբ ըմբռնվում էր հայերի կողմից<sup>4</sup>: Կոստանյանցը գրում է, թե ի տարբերություն հնդիկների ու հույների, հայերը մահվան աստված չունեն: Նա գտնում է, որ Սպանդարամետը հայոց աստվածների թագուհին էր՝ Մայր Երկիրը և երկինք-Արամազդի կինը<sup>5</sup>: Սուրբ Գրքի հայ թարգմանիչները Բաքոսը թարգմանել էին Սպանդարամետ: Հավանաբար նա երկրի հետ միաժամանակ նաև երկրագործության աստված էր:

Մարդկանց հոգին առնելու և նբանց մահվան աշխարհ տեղափոխելու համար կային հատուկ պաշտոնյաներ. Գաբրիել հրեշտակապետ, զորո, հոգեառ, որոնք երբեմն ակնարկվում են ժողովրդական սգո երգերի մեջ.

*Որդեկ էիր ու իրաւ էիր,*

*Չառնէիր առն ի առէն,*

*Քու հարիկտ (կամ մարիկտ) չար գրողէն:*

*Գրող, անօրեն գրող,*

*Վախթը չէի եկել տանելուն,*

<sup>1</sup> *Լալայան Ե.*, Ծիսական կարգերը եայոց մեջ. ըստ Սպենսերի, պրակ Ա, Թիֆլիս, 1913, էջ 53:

<sup>2</sup> *Այս վերապրուկները պահպանվում են նաև մեր կենցաղում. երբեմն հանգուցյալի հետ թաղում են նրա սիրած իրը, զբաղմունքի հիմնական առարկան: Այսպես, մեր դիտարկմամբ 1994թ. Շուշի քաղաքում տեղի ունեցած մի թաղման ժամանակ տատը նվերներ էր զետեղել երկու տարեկան թոռան դագաղում. հետևյալ խոսքերով. «Ծնված օրեդ ըմ իլալ պատրաստվեիս, մատաղ ինիմ, էս լոխ քու փայդ ա, քիզնիետ կտանիս» - Ե. Հ.:*

<sup>2</sup> *Ալիշան Ղ.*, Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 311:

<sup>3</sup> *Դուրեան Ե.*, Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն, Երուսաղեմ, 1933, էջ 63:

<sup>4</sup> *Կոստանյանց Կ.*, Հայոց հեթանոսական կրոնը, Վաղարշապատ, 1879, էջ 27:

*Տանելուն զնտան անելուն*<sup>5</sup>:

Ի սկզբանե ինչ ծագում էլ ունեցած լինի Սպանդարամետը, ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես մահվան թագավորության տեր ու տնօրեն:

Հնօրյա մարդը, որ ավելի վարժված էր իր զգացումն ու վերաբերմունքներն արտահայտել շարժումներով ու ծայնարկություններով, քան խոսքով, յուրաքանչյուր նշանակալից երևույթի արձագանքում էր արարողությամբ. արևի ծագմանն ու խավարմանը, փոթորկին ու կարկուտին, բերքի հասնելուն ու ընության վթռմանը, պատերազմին ու արհավիրքին... մահ մարդու ծննդյանն ու մահվանը:

Ըստ երևույթին հանգուցյալի հետ վարվելու երկու հիմնական եղանակներն էլ՝ թաղումը և այրումը, կապված են արևի պաշտամունքի հետ: Յուրաքանչյուր օրվա վերջում արևը անցնում է գետնի տակ (տեսողական պատրանք), մայր է մտնում և առավոտյան նորից ծնվում: Մեռած մարդուն էլ պետք է տանել գետնի տակ, որ կրկին հառնի: Մյուս աշխարհը, ուր գնում է արևը և ուր պետք է գնան մահածները գտնվում է հողի տակ: Վերջապես ընության մեջ ամեն ինչ հողից է աճում, նոր շիվ ու ծիլ կտա մահ թաղված մարդը:

Որոշ գիտնականներ (Յու. Վ. Գոթե, Խ. Սամուելյան) գտնում են, որ դիակիզումը կոչված է վառելով մարմինը՝ արագացնել հոգու անջատումը նրանից և հոգուն վախճանելով վախճանել շատ հեռու՝ գոլշանալով նրա գործելիք չարիքներից, թաղման գրեթե թուր ձևերը նույնպես ընդգրկում են հանգուցյալի վերադարձը խաթարող միջոցների՝ ապահովելով ողջերի անվտանգությունը: Առավել հավանական է թվում այն, որ դիակը հանձնում էին արևը խորհրդանշող, չարը վանող կրակի սրրագան, մաքրող գործողությամբ: «Իլիականում» նկարագրված Պատրոկլեսի դիակիզման տեսարանում Աքիլեսը երդվում է չլվանալ գլուխը, մինչև ռարեկամին չայրի «հրով ամենասուրը»: Հսկա խարույկի մեջ են նետվում ճարպոտ ցուլեր, մժույզներ, շներ,

քաջ պարմաններ: Ամրոց գիշեր Աքիլեսը պտտվում է խարույկի շուրջ՝ անընդհատ ողորալով ու զինի հեղելով<sup>6</sup>:

Դիակիզումը գոյություն է ունեցել հին աշխարհի շատ ժողովուրդների սովորությունների համակարգում (հույների, հռոմեացիների, իսթերի, վոացիների և այլոց): Դիակը վառում էին թուր անձնական իրերով, անասուններով հանդերձ: Հայաստանում դիակիզումը հանդիպում է վաղ, միջին և ուշ թրոնագեղարյան, վաղ երկաթի դարաշրջաններում, լայնորեն տարածվել է հելլենիստական դարաշրջանում, որի վերապրուկները պահպանվել են մինչև վերջերս գերեզմանին վառվող կրակի տեսքով: Դրա հիշողությունը կա ժողովուրդական սգո երգերում.

*Գացեք փատ ու փուշ բերեք,*

*Անորդի մարիկն երեցեք:*

*Երեցեք, մոխիր արեք,*

*Մոխիրն հովուն տուեք, ուր տանի*<sup>7</sup>:

Հայ ժողովուրդը արևը նույնացնում է կյանքի հետ. դրա ապացույցն են ռազմաթիվ հին ու նոր ասացվածքները, արտահայտությունները, երգումները, անեծքներն ու օրհնանքները. գվրև հատանել, յկրևե արկանել, արևպետ վախճանեալ, արևդ սիրես, արևիդ մեռնես, կարմիր արևից ընկած, իմ արև, արևը խվարից, արևի երես չտեսնես, արևդ թաղես, արևդ մեռնի, էրկեսն արև էղնիս և այլն:

Հայկական հուղարկավորության ծեսի ամենահին նկարագրությունները հանձնկնում են հայ գրավոր գրականության ու պատմության արշալույսին և կապվում են հինգերորդ ոսկեդեմիկ դարի պատմիչների երկերին:

Մովսես Խորենացու մեջբերած Արա Գեղեցիկի ավանդագրույցը<sup>8</sup> ռացիալիստում է մահվան հետ կապված մի քանի սովորություններ: Առաջինը հանգուցյալի վերակենդանանալու հնարավորության հավատն է, առեգների մասին եղած պատկերացումը՝ որպես շան պաշտամունքի մի դրսևորում: Առեգներին հիշատա-

<sup>5</sup> *Ճանիկեան Յ.*, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, երգ 59:

<sup>6</sup> *Պոմերու*, Իլիական, Երևան, 1987, երգ 23:

<sup>7</sup> *Ճանիկեան Յ.*, նշվ. աշխ., երգ 19:

<sup>8</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 33:

կում են նաև Փավետոս Բուզանդը, Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհադը: Շուներ մարդու ամենամտերիմ ու հավատարիմ կենդանին է, որը համարվում էր մարդկային հոգի ունեցող, և պատահական չէ, որ հենց նրան է վետահվել վերքերը լիզելու, հոգին մարմնին վերադարձնելու ոչ դյուրին գործը: Շամիրամը հավատում և հավաստացնում է, որ իր վերնատանը դրված Արայի դիակը կկենդանանա: Այսպես, Մուշեղ սպարապետի վերակենդանացմանը հավատում էին նրա հարազատները, ռոնք, ինչպես հաղորդում է Բուզանդը<sup>9</sup>, դիակը դնում են աշտարակի երդիկը վրա և սպասում առեգների այցելությանը (րառը ստուգարանվել է որպես առող և լզող, հաղ լզող, քաջ սայրերի լզող, Արային լիզող<sup>10</sup>):

Ըստ Խ. Սամուելյանի ընթացման մի տեղեկության<sup>11</sup>, Վանի Լեզք գյուղի Ամենափրկեչ վանքի տեղում կանգնեցված կրոնքի առջև մարդիկ շներին լիզել էին տալիս իրենց վերքերը: Ս. Հարությունյանի հանգամանալից քննությունից պարզվում է, որ շան հետ կապված հավատալիքները առավել շատ կապվում են թաղման ծիսակատարությունների և հանդերձյալ աշխարհի մասին եղած պատկերացումների հետ<sup>12</sup>: Շուներ հանդես է գալիս միթ իրրև հոգեառ, հոգեկիր, հոգիների առաջնորդ, հոգին մարմնից անջատող, մերթ իրրև հոգիները մարմնին վերադարձնող: Շան դերի այսօրինակ ըմբռնմանը չեն հակասում ոչ Արտավազդի (ինչպես նաև վրաց Ամիրանի) շղթաները կրծող և նրան ազատություն ընդունելու ձգտող շների առկայությունը մեր դիցարանության մեջ, ոչ էլ գերեզմաններից դուրս ելած մեռելների (գոռնավազդի, գոռնադար, խորթադ) շան կամ գայլի կերպարանքով շրջելու վերաբերյալ հավատալիքը: Ռումինական սգո երգում ասվում է.

<sup>9</sup> Փավետոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 363:

<sup>10</sup> Ամսոյան Դ., Արմատական րառարան, հ.1, Երևան, 1971, էջ 260:

<sup>11</sup> Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ.Ա, Երևան, 1941, էջ 120:

<sup>12</sup> Հարությունյան Ս., Մի դրվագ հայ առասպելաբանությունից, «Պատմա-քանակաիրական հանդես», 1989, № 1:

*Лают у меня собаки, лают,  
Словно чуют бешеного волка,  
То не бешеный волк,  
То самодива (смерть)  
С посохом в руке  
И с прялкой у пояса  
С шерстяной кудель*<sup>13</sup>.

Այուս սովորությունը, որի անդրադարձը կա Արա Գեղեցիկը գրույցում, մահվան, արյան վրեժի հասկացությունն է. հայոց գորքը պատրաստվում է նորից պատերազմելու՝ Արայի մահվան վրեժը առնելու համար: Ղևոնդ պատմիչը ևս դարեր անց այդպիսի դրվագ է նկարագրել. Սահակ և Համազասպ Արծրունի եղբայրների՝ արարների դեմ մղած ճակատամարտում զոհվելու լուրը առնելով, երրորդ եղբայր Գագիկը, այլ նախարարների հետ, վայոյ-ճիչով հասնում է ուղևորաշտ՝ վրեժ առնելու նրանց մահվան համար: Սակայն չհասնելով թշնամիներին, վշտոտ եղբայրը դառնում է ձեռնունայն և ողորմ ու լացով թաղում սպանվածներին<sup>14</sup>:

Արծրունյաց Դերենիկ իշխանի այրին իր սգո խոսքերում երգվում է արևի երես չտեսնել, մինչև որդիները չմեծանան և չառնեն հոր վրեժը.

*Ձի մի արեգակն յանհաս բարձրութեանն երկնից ծենեսցի կամար.*

*եւ զճառագայթս ի խոնարի արծակելով՝ զիմս լուսաւորեսցէ խաւար.*

*եւ կամ լուսինն ի լրմանն ժամանեալ ամանակ,*

*արուսեկին հանդերձ և բնաւ զարդուն աստեղաց՝*

*զիմս փարատեսցէ մէգ, մինչեւ տացէ ինձ Աստուած*

*յորդոց իմոց այրասիրտ նման հօր իլրոյ,*

*որ ի կեանս իմ կամքէ զկնի կենաց իմոց*

*ի վերայ զերեզմանին տացէ աւետիս՝*

*առեալ վրէժ հեղման արեան հօր իլրոյ*

<sup>13</sup> Свешникова Т., Волк в контексте румынского погребального обряда. Исследования в области балтославянской культуры. Погребальный обряд, Москва, 1990, с.131.

<sup>14</sup> Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 107:

ի գլխոց, այնոցիկ, որք զայս ինձ հատուցին  
խաւար<sup>15</sup>:

Ժողովուրդը հավատում էր և այժմ էլ հավա-  
տում է, որ սպանվածի հոգին չի հանգստանա,  
մինչև նրա արյան վոեժը չառնվո՞ւ:

Երրորդ հիշատակությունը Քերթոզահոր պատ-  
մության, որ առնչվում է քննարկվող թեմային,  
Շամիրամի քար դառնալու առասպելն է: Նման  
գրույցներով հարուստ է հայկական ավանդա-  
պատումը: Պատմական Հայաստանի տարած-  
քը լի է սրբազան քարերով, որոնցից յուրաքան-  
չյուրը սրտահույզ պատմություններով է պա-  
րուրված («Հարս ու փեսի քար», «Աղջիկ-տղու  
քար» և այլն)<sup>16</sup>: Այս հավաստի հետ է աղերսվում  
մահարձան կանգնեցնելու սովորությունը.

*Իմ բախտն էլ քար էր, ինչ էնեմ,*

*Քուր ջան, ինչո՞ւ դառար լեռ քար,*

- ողորմ է քույրը վաղամեռիկ քրոջը<sup>17</sup>:

Ժամանակագրական առումով թաղման արա-  
րողությունների երկոորդ հիշատակությունը վե-  
րարերում է Արտաշես արքային: Պատկերելով  
աշխարհաշեն ու քաջազն թագավորի կյանքի  
որոշ դրվագներ, Պատմահայրը կանգ է առնում

<sup>15</sup> *Թովմա Արծրունի և Անանուն*, Պատմություն Արծրունյաց  
տան, Երևան, 1985, էջ 414:

<sup>16</sup> 1968 թ. ունի աղբյուրների ազգայնամուլ՝ Արշադ անունով,  
հոշոռում և սպանում է Արցախի Բերդաշեն գյուղացի  
Բենիկ Մովսիսյանի իննամյա որդուն: Հայրը որդու դիակի  
առջև երդվում է իր ծոցերով առնել նրա մատաղ արյան  
վոեժը: Աղբյուրական ծախու դատարանի կայացրած  
անարդար դատավճիռն զագագած հայրը լքեցրեց  
օգնությանը վառում է հանգագործին առնող մեքենան և  
ենթարկվում տասը տարվա ազատազրկման: Բանտից  
վերադառնալուց հետո 1-2 տարի ապրելով ավանդա-  
պահ հայրը անխռով հանգչում է որդու կողքին:  
Սակայն եթե մահվան պատճառը ոչ թե ազգի դարավոր,  
այլ անհատական թշնամի է, լքտ հակոտնյա սովորու-  
թյան, երբեմն վրեժի քինոտ ծանրությունը տեղի է տալիս  
ներման հոգեպարար թեթևության առջև. «Սպանողը միջ-  
նորդների հետ կզա սպանվածի տունը, կբերի թուր և պա-  
տանքի կտոր, օջախի վրա կնետի՝ որպես սուրբ տեղ,  
կասի. «Զեր օջախն իմ թալի, կուզիք ազատ էնի, կուզիք  
սպանեցեք»: Ըստ որի տուժած կողմը համաձայնում է մե-  
ղապարտին ներել՝ պայմանով, որ նա զնա սպանվածի գե-  
րեզմանի շուրջը «չոր քութանու պես թաթելով յոթ անգամ  
շրջի և մեռնողի մեղքը իր վրան առնի», - գրում է Սարգիս  
Հայկունին (Ավագյան Վ., Սարգիս Հայկունի, ԴԱԲ, սյր.4,  
Երևան, 1973, էջ 48) - Ե.Դ.:

<sup>17</sup> *Ղանալանյան Ա.*, Ավանդապատում, Երևան, 1969:

<sup>18</sup> *Գրիգորյան Ռ.*, Գեղարքունիք, ԴԱԲ, պր.14, Երևան, 1983,  
էջ 88:

նրա հուղարկավորության նկարագրության վրա:  
Մեծապատիվ արքայի դիակին շքեղ սլատիվ-  
ներ են մատուցում: Հանգչում է քաջի մարմինը  
ոսկոհուռ դագաղի մեջ, ծածկված ոսկեգօծ  
շղարշներով, ռազմությունը հոսում է նրա ե-  
տևից, առջևից պղնձե փողեր են հնչեցնում, ե-  
տևից գնում են ծայնարկու կույսեր ու լալկան  
կանայք, ապա ըստ մախնյաց կարգի, քայլում  
են որդիները, ազգականների բազմությունը,  
սրանց հետևում են ազգի մահապետները, մա-  
խարարական գնդերը, գորականների վաշտե-  
րը՝ լուրորդ գինված, ինչպես պատերազմի ժա-  
մանակ (դարձյալ գործ ունեին չար թշնամու  
հետ, որը իսկ է իրենց թագավորին): Եվ ամե-  
նավերջում՝ ուսմիկների բազմությունը: Դագա-  
ղի ետևից ըստ հանգուցյալին մերձավորության  
աստիճանի, համապատասխան հեռավորությամբ  
քայլելու սովորությունը պահպանվել է մինչև  
այժմ: Քերթոզը մշում է, որ նրան այսպես տա-  
նելով թաղեցին ու նրա դիակի շուրջ կամավոր  
մահեր եղան<sup>18</sup>: Հետաքրքիր է, որ «Իլիակա-  
նուն» Աբիլեսը ինքն է գոհված Պատրոկլեսի  
պատվին տասներկու քաջ պատանիների սրա-  
խողխող անում և վառում նրա հետ<sup>19</sup>, իսկ Ար-  
տաշեսի համար նրա կանայք, հարձերը, մտե-  
րիմ ծառաները կամավոր ինքնագոհարերում  
են կատարում: Ըստ երևույթին, այս՝ կամովն  
գոհարերվելու սովորությունը՝ համուն սիրելիի,  
լինելով ծեսի պարտադրանք, պահպանվել է  
մաև հեթանոսության վերացումից հետո, հետգ-  
հետե ստանալով քրիստոնեական մահատա-  
կության ընդունում: Ըստ Մովսես Կաղանկատվա-  
ցու, «Աղվանքի րարեպաշտ Վաչագան թագա-  
վորը Եղիշայի մահատակության փոսի վրա  
հուշասլուն կանգնեցրեց: Իսկ թագավորի սենե-  
կապանը առանձնանալով այնտեղ իր կյանքը  
վերջացրեց այդ հուշասլան վրա»<sup>20</sup>:

<sup>18</sup> *Մովսես Խորենացի*, մշվ.աշխ., էջ 128:

<sup>19</sup> *Հոմերոս*, մշվ.աշխ., երգ 23:

<sup>20</sup> *Մովսես Կաղանկատվացի*, Պատմություն Աղվանից աշ-  
խարհի, Երևան, 1969, էջ 8:

Ավելի ուշ կենդանի մարդկանց փոխարեն հանգուցյալի հետ թաղում էին քարե արձանիկներ, իսկ ոռոմինացիները մինչև վերջերս դագաղի մեջ շորե տիկնիկներ էին դնում՝ յուրաքանչյուրը որևէ կենդանի հարազատի անունով<sup>21</sup>:

Արի արքա Արտաշեսի մասին եղած գողթան երգերի շարքում կան երկուսը, որոնք ուշագրավ են մեր թեմայի առումով: Առաջինը որդու՝ Արտավազդի հետ ունեցած երկխոսությունն է.

*Մինչ դու գնացեր*

*եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,*

*ես աւերակացս ո՛ւն. թագաւորեմ<sup>22</sup>:*

Այնքան մարդիկ և հարստություն թաղվեց հոր հետ, որ նրան հաջորդող ողորմ մի պահ մոլորվեց, զարացավ և ընդվզեց մահացած հոր դեմ, որը նրան պատասխանեց անեծքով.

*Եթէ դու յորս հեծցիս*

*յԱզատն ի վեր ի Մասիս,*

*զՔեզ կալցինքաջք, տարցին*

*յԱզատն ի վեր ի Մասիս.*

*Անդ կայցես և զլոյս մի տեսցես<sup>23</sup>:*

Անկասկած գողթան երգերը արվեստավոր գրական ստեղծագործություններ են, և գողթան երգիչը կարող էր հորինել հետագայում՝ մեռած արքայի անունից: Բացառված չէ, որ անեծք-հատվածը հորինվել է հենց թաղման հանդեսի ժամանակ եղբերգակ գուսանի կողմից: Այս կերպ և այսպիսի պայմաններում է հորինվել նաև մյուս հատվածը, ուր անվերադարձ հեռացած Արտաշեսը անսփոփ կարոտ է զգում դեպի իր հայրենիքը.

*Ու տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի*

*եւ գառաւօտն նաւասարդի,*

*Զվազել եղանց ու զվարզելն եղջերուսց.*

*Սեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,*

*Որպես օրէն է թագաւորաց<sup>24</sup>:*

Թաղման հեթանոսական ծիսակատարության ժամանակ երգող-պաղողներից մեկը՝ հանգուցյալի դիմակով ու հագուստով կատարում է

նրա դերը: Օ. Ֆրեյդենբերգը գրում է. «В сценической части выноса, когда актеры в восковой маске покойного стоят на телеге и манерами своими, одеждой и инсигниями изображают этого покойного»<sup>25</sup>:

Սրա վերապրուկները ևս պահպանվեցին մինչև մեր օրերը. Զեյթունում կանայք մաշի ետևից եկեղեցի էին զնում ձեռքներին խաղացնելով հանգուցյալի շորերը<sup>26</sup>, այժմ՝ դագաղի գլխավերևում դնում են մեռածի լուսանկարը և հաճախակի դիմում են նրան, ողորասաց կանանցից մեկը պատասխանում է մյուսների կողմից մահացածին տրվող հարցերին ու դիմումներին:

Ժամանակի ընթացքում հին հավատալիքները, սովորությունները տեղի են տալիս նորերի առջև, սակայն իր հիմնային դրույթներով մարդկային կյանքը հարազատ է մնում իր նախաստեղծ էությանը: Մնում են էական ավանդույթները՝ որոշ կողմերով ու տարրերով համապատասխանեցվելով նոր գաղափարներին ու հայացքներին:

Հեթանոս հայր քրիստոնյա հայից ամենից առաջ տարրերվում էր ապրելակերպի ազատությամբ, զգացածն արտահայտելու անկաշկանդությամբ, կենցաղի ճոխությամբ ու բնության երևույթներին արձագանքելու անմիջականությամբ: «Բնութեան կենաց մէջ ընկղմած վայրագ ժողովուրդն իր պատերազմներն ու որսերն ենքը՝ ուրիշ մեկ այնչափ գինք թուրովն հափշտակող ու խորունկ մտադրութիւնը գրավող ընկերական խմբույք կամ գինարուք մը, յաջող ու հուսալից հարսանիք մը ու անողորմ մահուան արկածը, որոնք իր կենաց ողորդութեան նշանաւոր արարվածներն են», - գրում է Յ. Գաթրճյանը<sup>27</sup>:

Մահը, թերևս, այս թուղթի մեջ ամենաշատն էր ցնցում տառաջիորեն բնության մասնիկը

<sup>21</sup> Свешникова Т., указ. соч., с. 133.

<sup>22</sup> Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 129:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. Կոստանյանց Կ., Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87:

<sup>25</sup> Фрейденберг О.М., Семантика постройки кукольного театра, Миф и театр, Москва, 1988, с. 19.

<sup>26</sup> Ալլահվերդյան Զ., Ուլնիա կամ Զեյթուն. լեռնային ավան հ Կիլիկիա, Կ. Պոլիս, 1884, էջ 96:

<sup>27</sup> Գաթրճյան Զ., Պատմութիւն մատենագրութեան հայոց, Վիեննա, 1851, էջ 27:

հանդիսացող մարդուն, որի ամենագործը ակնածամքը մեռած նախնիների նկատմամբ էր: Իզուր չէ Ագաթանգեղոսը այսպես բացատրում նոր Աստծո խաչվելը. «Եվ որովհետև մարդիկ սովոր էին մեռյալների անշունչ արձաններին երկրպագելու, ինքն էլ մեռյալ արձան դարձավ իրաչի վրա»<sup>28</sup>:

Ինքնարտահայտման առաջին ձևերը գանազան շարժումներ էին և պարը, որոնց ավելի ուշ միացավ երաժշտությունը, ապա և խոսքը: Հասարակության առաջընթացում որքան կատարելագործվեց խոսքը, այնքան սահմանափակվեց շարժումների ու պարի գործառույթը կենցաղում: Պարը ուղեկցել է հայկական թուր ավանդական ծեսերին, այն իր անվեճելի տեղն ուներ նաև թաղման ծեսի արարողակարգում:

3. Մանդակունին թաղման եթանոսական հանդեսը համարելով անառակ, եանցավոր ծես և անկասկած թագմիցս ակամատես լինելով այդօրինակ հանդեսի, մեկ առ մեկ թվարկել է թուր ամրարո գործողություններն ու անպատշաճությունները. կանայք ու տղամարդիկ մնջեցյալի մոտ սատանայական վայոց էին թարծրացնում, մագերը արծակում, փետում, մերկանում էին և մնում միայն գոգնոցով, ուսերը մերկացնում, ճակատներին հարվածում, մերկ մարմնի վրա քուրծ հագնում, գլուխներին մոխիր թափում, ճչում, բղավում, կոծելով արյունաշաղախ լինում, այտերը ճանկռում, ստիճքները քրքրում, իսկ ոմանք սատանայական գգեստներ էին հագնում, եղինջով մարմիններն արյունոտում, հանդերձները պատառոտում, եղերամոր դեկավարությամբ անառակ ցույցեր անում<sup>29</sup>:

Դեթանոսական հուղարկավորության մասին տեղեկությունները մեզ հաղորդել են քրիստոնեության սպասավորները, որոնք պայքարում էին հեթանոսության դեմ, ձգտում վերացնել նրա ավանդույթները և, բնականաբար, ամեն ինչ ներկայացնում էին սովերոտ տեսանկյունից: Տիեզերական եկեղեցին այս սովորություն-

ները վերացնելու համար (որոնք հատուկ էին նաև հույներին, հռոմեացիներին, հրեաներին և այլոց) պարբերաբար զանազան միջոցների է դիմել, հատուկ կանոններ մշակել: Գրիգոր Լուսավորչի կանոններում նշվում են կոծ դնողները, իսկ Շահապիվանի կանոններում<sup>30</sup> մի տարի զրկվում եկեղեցի հաճախելու իրավունքից: Ներսես Մեծը նույնպես ծառանում է հեթանոսական լաց ու կոծի դեմ և խրատում սփոփվել հարության հույսով<sup>31</sup>: Նրա օրոք Աշտիշատի եկեղեցական ժողովը արգելեց կոծը: Սահակ Պարթևը կոծողներին դատապարտել և հատուկ պատիժ է սահմանել իր կանոններում<sup>32</sup>:

Թաղման ծեսի ընթացքում կատարվող պարերի մասին հաղորդում է Բուզանդը, պատմելով, որ Ներսես Մեծի մահից հետո ժողովուրդը նորից դարձավ թաղման հեթանոսական ծեսին. կոծում էին, ճիվադային պարեր պարում դեմ առ դեմ՝ միմյանց ափի խփելով, (Թաղման պարեր էին պարում նաև հույները<sup>33</sup>, պարթևները<sup>34</sup>, Սարգիս կոզու բնակոչները<sup>35</sup>, օսերն ու Միջին Ասիայի բնակոչները):

Կոծապարը ամբաժան էր կոծի հանդեսից: Յուրաքանչյուր ժողովուրդ ունեցել է իր ողբապարը՝ ըստ ազգային պարային յուրահատկությունների, մահվան շուրջ հյուսած հավատալիքների և վշտի դրսևորման ձևերի՝ ենթարկվելով ընդունված պատշաճության կանոններին:

Հայկական ողբի պարերը հանգամանորեն ուսումնասիրել է ազգագրագետ Ս. Լիսիցյանը<sup>36</sup>: Նա գտնում է, որ ինչպես սգո երգերը ունենին

<sup>30</sup> Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., երրորդ դարություն, գլ. ԺԳ:

<sup>31</sup> Փավստոս Բուզանդ, նշվ. աշխ., երրորդ դարություն, գլ. ԺԳ:

<sup>32</sup> Կանոնագիրք եայոց, Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 385:

<sup>33</sup> Лисицкая С., Армянские старинные пляски, АН АССР, Ереван, 1983.

<sup>34</sup> Խաչատրյան Ժ., Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), № 17, Արտաշատ - 2-րդ, Հնագիտական պեղումները Հայաստանում, Երևան, 1981, էջ 59:

<sup>35</sup> Խեչումյան Վ., Կոծի թաաներականացված հանդեսներ, «Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1972, № 7, էջ 144:

<sup>36</sup> Лисицкая С., указ. соч.

<sup>28</sup> Ագաթանգեղոս, Պատմություն, Երևան, 1977, էջ 49:

<sup>29</sup> Տեառն Յովհաննու Մանդակունու հայոց եայրապետի ճառք, Վենետիկ, 1860, «Թուղթք մխիթարութեան վախճանելոյ յաշխարհս»:

իրենց հատուկ կատարողները՝ ծայնարկուները, այնպես էլ սգո պարերը կատարում էին կոծապարուները կամ ծեծկվողները, որոնք ուլուլիկ էին անում, ջայլում, օղիկ-օղիկ գալիս: Սրանք ևս ունեին իրենց գլխավորը՝ կոծաղիորը (կոծ դնողը): Կոծի հանդեսները տեղի էին ունենում կոծատեղիներում կամ աշխարաններում՝ գերեզմանոցներին կամ դամբարաններին կից հարթակներում: Այս պարերը բաղկացած էին բացառապես դեպի ծախ և ետ տանող քայլերից, որոնք խորհրդանշում էին դժբախտություն, անհաջողություն, վիշտ և նպատակ ունեին պայքարել դրանց դեմ: Դրանք աչքի էին ընկնում մեծ շարժումությամբ և գգայական լարվածությամբ, ողորդաշունչ մանր քայլերով, տրորվելու, օղիկ-օղիկ լինելու, շուռումուռ գալու շարժումներով: Այս շուռումուռ կամ ժուռումուռ գալը խորհրդանշում է ջահել մեղները (ժուռ-խակ): Ժողովրդական անեծքը չարամադթում է. «Ժուռումուռամեռ»<sup>37</sup>, իսկ սգո երգը մղկտում է. «խակ ու ժուռ եղած բալա ջա՛ն...»<sup>38</sup>:

Աշան գյուղի մի քանի տարեցներ հիշում են, որ 1919 թ., երբ գյուղացի Սարգիս Դովսեփյանը ամուսնացնում էր իր անդրանիկ որդուն, հարսանիքի ամենաաշխույժ պահին մահացավ հանկարծախաս հիվանդությունից անկողին ընկած Անուշը՝ փեսայի քույրը: Հաջորդ առավոտյան գյուղի հայտնի երաժիշտը կանգնած նըաբակում «կանչ» էր նվագում (հրավեր): Ընդարձակ բակում. ուր դրված էր դագաղը, գերեզմանոցի ճանապարհին ու գերեզմանատանը ողջ գյուղը Սարգիսի գլխավորությամբ «յալի արփոնալ, խաղում ար»:

Կոծապարերի իրողությունը փաստում են նաև սգո երգերը: Ծովում խեղդամահ եղած երիտասարդ Արշակին նվիրված սգո երգում սգապարի կոչ է արվում նրա կնոջը.

*Շորորա, Սալաթ, շորորա,  
Նավակն Արշակին կօրորա...*<sup>39</sup>

<sup>37</sup> Էմինյան ազգագրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), գիրք 2, Մոսկվա, 1906, էջ 307:

<sup>38</sup> ԷԱԺ, գիրք Ա, Մոսկվա, 1901, էջ 151:

<sup>39</sup> *Թումանյան Մ.*, Հայրենի երգ ու բան, հ.3, Երևան, 1986, էջ 137:

Կոծապարերը աստիճանաբար վերածվեցին հիշատակի պարերի: Մեծելոցներին և թոլոր այն ղեպքերում, երբ հարգում էին հանգուցյալի հիշատակը, պարում էին գերեզմանատներում<sup>40</sup>:

Թաղման ծեսի ժամանակ արարողությունների հետ միասին հուղարկավորները դիմում էին խոսքի հմայության օգնությանը: Գերեզմանական տաղերը, դամբանական ճառերը, սգո երգերը, ողբի խոսքերը այնքան ընդունված և արմատացած էին ժողովրդի մեջ, որ ունեին իրենց համապատասխան պաշտոնյաները. մայր ողբոց կամ եղերամայր, դամբանական երգիչ կամ վողար, եղերերգու կամ ողբասաց, բանահյուս կամայք, լալականք կամ ծայնարկու կույսեր, եղերական կամ աշխարող կամայք և այլն:

Մերձավորի վախճանվելուց սկսած մինչև նրա հիշատակի խամբումը հարազատները գուսանների օգնությամբ հանգուցյալի մասին հորինել են երգեր ու մրմունջներ:

Դամբանական երգչի և գերեզմանական տաղի իրողությունն է վեայում Դիոնիսոս Թրակացու հայ մեկնիչների միջոցով մեզ հասած բանաստեղծական հնագույն պատահիկը.

*Եւ ներգործող ի միտս երեւիր  
Առ խորհուրդս փողարին  
Սեծոգւոյ Տիգրանայ գեղամին Տիգրանուհի  
Իւր ներգործեալ գկողաբաղն,  
Նաեւ ողջամիտ աշխարհածուհի*<sup>41</sup>:

Բանաստեղծը անդրադառնալով Տիգրանուհու հուղարկավորության հանդեսին, նկատում է, որ «փողարը» այնքան հուզիչ ու ճարտար էր երգում, որ բացառապես էր Տիգրանի ապրումները:

Պատրաստի, ընդունված երգն ու պարը, նվագն ու երկխոսությունը հուղարկավորության ծեսին հաղորդում էին թատերային տարրեր:

Գնելի կոծի տեսարանը մեզ ծանոթացնում է մի շարք մանրամասների.

<sup>40</sup> *Խաչատրյան Ժ.*, նշվ. աշխ., էջ 55, Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 82:

<sup>41</sup> *Адоны А.*, Дионис Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, сс. 128 - 129.

ա) կոծին պետք է մասնակցեին մեռելին ճանաչող թուր մարդիկ: Սըշակ թագավորը հըլամայում է թուրին գնալ և կոծել, «ոչ ոք չհամարձակվի ետ մնալ»<sup>42</sup>: Այժմ էլ, ոչ միայն բարեկամի ու մտերմի, այլև ամգամ հեռավոր ծանոթի հուղարկավորությանը ներկայանալը հոգու պարտք է համարվում: Այսպես էր նաև Դերենիկ իշխանի մահվան պարագայում<sup>43</sup>. ագականների ու աիկինների հետ սգում էին թուրը: Արհեստավորներն ու աշխատավորները, թողած իրենց գործերը, ձեռքները ծնկներին կամ ծնոտներին դրած լալիս էին, իշխաններն ու ազատները ողորի խոսքեր էին ասում:

*Ո՞ր լքեալ կորուսաք զպատուական մարգարիտն,*

*զպարծանքն հայոց, զքաջն ամպարտելի,*

*որ զմեծ պատերազմունս դիւրաւ մղէր*

*եւ ամուն բարձրագոյն ինքեան և մեզ ստամայր:*

*Ո՞ր է բարեմիտ շրթանցն ժպտումն,*

*որ բազմերանգ բազմականս ոսկեզարդ զահոցիցն*

*միշտ զմեզ ուբախարարն զմայլեցուցանէր բաժակաւ:*

*Ո՞ր առատ ծիրք ձեռինն պարզեաբաշխ,*

*որ երեւելի զարդութ ցանկ զմեզ շքեղացուցանէր:*

*Վա՛յ և ավա՛դ մերոյս կենդանութեան:*

*Ընդե՞ր ոչ պատահեաց մեզ օրն այն*

*ի մեծ պատերազմի ի մէջ միզակախումն զօրաց,*

*թերեւս ու մերոց լիներ բարձունն կենաց*<sup>44</sup>:

ր) Գնելի դագաղի մոտ Փառանձեմը ընթերցում էր: Սուփի տիկնոջ ապարանքից լսվում էին ընթերցումից աղաղակներ: «Ամբողջ երկիրը միատեղ վայնասունով լցված ողորում էր իշխանին կականալի ու սաստիկ գոռում գոչումով», - նկարագրում է Մովսես Կաղանկատիսցին Ջիվանշիր իշխանի մահը<sup>45</sup>: Ինչպես միշտ, ժողովուրդը անվտանգ է իր ընթերցումներում, երբ

մահվան առաջ ընթերցումը անվանում է կական, շիվան-թիան, վայնասուն (վինավո), գուշակինչ է այլ: Այժմ էլ գյուղական վայրերում թաղման արարողությունն աչքի է ընկնում անսովոր բարձր կանչերով:

գ) Փառանձեմը փետում է մագերը, սուգ անող Սուփի տիկնոջ ապարանքից լսելի էին կուրծք ընթերցում, ճակատին հարվածելու ճայթյուններ: Մագերը փետում է նաև Յեկտորի մայրը՝ «Իլիականում», իսկ Աբիլեսը կտրում է իր գանգուրները և դնում մեռած Պատրոկլեսի ափում՝ որպես ընծա<sup>46</sup>: Ինքնախարագանման այս ձևերը շարունակում են սիրեցյալի հետ կամավոր մահանալու ցանկություններ արտահայտել: Ծանկոռվում էին, արյունաշաղախ լինում՝ ստեղծելով հանգուցյալի համար զոհվելու և սեփական արյունը հեղելու պատրանք: Ժողովրդական մտածողության համակարգում հատուկ տեղ է գրավում ամբողջը մասով փոխադրվելու գաղափարը: Վերոհիշյալ դեպքում ամբողջը փոխադրվում է խեղանդամություն չառաջացնող մասով՝ մագով: Կանայք հանում սիրեցյալ ամուսնու, որդու կամ եղորո հրաժարվում էին իրենց գեղեցկությունն ու պարծանքը կազմող հյուսերից, տղամարդիկ կտրում էին միուրները: Մինչև վերջին ժամանակներս առկա էր ողորության առթիվ ծամը կտրելու սովորությունը (Սասուն, Մուշ, Տարոն, Ջավախք)<sup>47</sup>:

Երևույթի խոսքային արտահայտությունները ավելի երկար են պահվում լեզվական կտրվածքներում, առանձնապես նրա բարրառային շերտերում. Օսմկըրուկ, վարսդ կտրեմ, անմագ մնաս և այլ անեծքները ակնարկում են դիմացինի հաղազատի մահվան ցանկություն: Նահապետ Քուշակին վերագրված հայերենի հերոսը ասում է.

*Ես Սեռնիմի քո վրայ,*

<sup>46</sup> *Չոմերոս, մշխ.աշխ.*, մույն տեղում:

<sup>47</sup> *Կարապետյան Ե.*, Սասուն, Երևան, 1962, էջ 112, *Լալայան Ե.*, Մուշ-Տարոն, Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գիրք 26, 1916, էջ 187, *Լալայան Ե.*, *Ջավախք*, Երկեր, հ.1, Երևան, 1983, էջ 204:

*Տողերիս հեղինակի տատը 1966 թ. կտրել է իր երկար ծամը և զետեղել վթարի զոհ դարձած ամուսնու դագաղում - Ե.Դ.:*

<sup>42</sup> *Փալատոս Բուզանդ*, մշվ.աշխ., էջ 189:

<sup>43</sup> *Թովմա Արծրունի և Ամանուն*, մշվ.աշխ., էջ 412-414:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 416:

<sup>45</sup> *Մովսես Կաղանկատիցի*, մշխ.աշխ., էջ 175:

*Դու երգես ծաները կըտրես*<sup>48</sup>:

դ) Ըստ Ղազար Փարպեցու պատմության, Վարդան Մամիկոնյանի եղբոր՝ Չմայակի գոհվելու առիթով գինվորները փոփում էին գետնին. «Ի սուգ մեծ մտեալ ի վայր կործանէին, չունեմալով ամենեւին յոյս միայնաբարութեան»<sup>49</sup>: Սուփի տիկինը փոփում է գետնին և գլխին մոխիր թափում, իսկ սգացող մյուս աիկիները փողոցներում քարշում են իրենց մերկ մարմինները: Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Չարահիկի երեք եղբայրները ճանաչելով իրենց սպանված եղբոր գլուխը, գլխներին հող են թափում և աղիողորմ ողբում<sup>50</sup>: Գետնին թափալվալն ու գլխին հող թափելը հետը թաղվելու ցանկություն է արտահայտում, իսկ մոխիր թափելը՝ մեռածի հետ միասին վառվելու րադանք:

Ինչքան մեծ է մարդու համրավը, նշանակալից ու ծավալուն նրա արածն ու թողածը, այնքան հարուստ էր նրա թաղման հանդեսը երգ ու կոծով, այնքան երկար էին սուգ անում նրա համար: Չայ ժողովրդական վսպում Սասունը Մհերի համար յոթ տարի սուգ է անում, Դեղծուն-ծամը փակում է պալատի դուռն ու լուսամուտը և սուգ մտնում, մինչև Դավիթը մեծանա և գրավի հոր տեղը: Մեծ սուգ է կատարվել Խոսրով թագավորի, մարտում ընկած Վաչե Մամիկոնյան զորավարի և այլոց համար: Աշոտ Սուռաջին Բագրատունի թագավորին թաղեցին ոսկեզարդ հանդերձներով, պերճափայլ դագաղով, գինված գողականների և օրհներգու, սաղմոսերգու հոգևորականների րագմությամբ: Թաղման պաշտոնական հանդեսը գուգակցվեց կոծի աշխարհիկ ծեսով: «Այլտեղ տեսնելու էր ողբերգակ գուսաններին, այլև աիկիներին և տանտիկիներին արտասվաթոր կականումն ու սուգը», - գրում է Չովհաննես Դրասխանակերտցին<sup>51</sup>:

Ո՞րն է սուգ մտնելը. նախ մասնակիորեն հրաժարվում են առօրյա, կենսականորեն անհրա-

ժեշտ գործողություններից: Սնվում են այնքան, որ պահպանեն գոյությունը, կամ օրեր շարունակ թողնում են հրաժարվում են սննդից, պարուրվում են սևով, թողնելով հարդարվելն ու զարդարվելը: Տղամարդիկ չեն սափրվում, չեն լողանում, անթափանց վարագույրներով փակում են բոլոր լուսամուտները, տնից դուրս չեն գալիս, հրաժարվում են լույս ու արևից, քանզի նրանից գրկված է հարազատը: Դեռատի կանայք մոռանում են անգամ ծծկեր երեխաներին կերակրելը և ամբողջովին տարվում ողբալով:

ե) Անանուն պատմիչը իր նկարագրած թաղման հանդեսում ակնարկում է մի սովորություն ևս, որի հետքերը այսօր էլ կան հայ ժողովրդի կենցաղում: Դերենիկի երեխային գրկած տարել էին կոծի հանդեսին, և իշխանուհին, խոսելով վիեժի մասին, ձեռքը դնում է Գագիկ որդու ուսին (որը և հետագայում առնում է հոր մահվան վիեժը), այսինքն՝ կորցնելով ամուսնուն, հենարան է ընդունում նրան: Այժմ էլ, վշտահար արցախցին՝ կորցնելով իր տան սյունը, իր տիրոջն ու պահապանին, նեցուկ է փնտրում իր մերձավորների մեջ և սգո արարողության ժամանակ իրենարկվում է մեկի առաջ («աշկերը յիրա օճել»): Սգո երգը այսպես է դիմում վերջինիս.

*Լընիս մարիկ ու անես մարութիւն,*

*Լընիս հարիկ ու անես հարութիւն,*

*Իմ անուշիկ խաթունին (կամ հօրն) խաթերն համար*<sup>52</sup>:

Այս ընտրյալը պարտավորվում է հոգ տանել սգվիրների համար: Առավել ծանր է լինում այդպիսի նեցուկ չգտնող սգվորի վիճակը. «Մինը կա վուչ, թա աշկերս յիրա օճիմ»<sup>53</sup>:

Լաց ու կոծի ուժգնության աստիճանը պայմանավորվում էր ոչ միայն մահացած անձնավիրության համրավի չափով, այլև նրան բաժին ընկած մահվան ընկություն: Մանուել Սպարապետը ավստոսում է, որ ինքը չի գոհվում կռվի դաշտում, այլ մահանում է վատթար մահով՝ ան-

<sup>48</sup> *Մնացականյան Ա.*, Չայրեններ, Երևան, 1995, էջ 371:

<sup>49</sup> *Ղազար Փարպեցի*, Չայոց պատմություն, Երևան, 1982, էջ 277:

<sup>50</sup> *Մատթեոս Ուռհայեցի*, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 74:

<sup>51</sup> *Չովհաննես Դրասխանակերտցի*, Չայոց պատմություն, Երևան, 1996, էջ 147:

<sup>52</sup> *Ճանիկեան Յ.*, նշխաշխ., երգ 43:

<sup>53</sup> Արցախյան առած, անձնական գրառումներ:

կողմում պառկած<sup>54</sup>։ Երր հայտնի դարձավ, որ գնել իշխանը սպանվել է ոչ թե պատահարար, այլ դարձել է խարդավանքի զոհ, սաստկացան ողորն ու կոծը։ Ողորերգական մահը, ինչ-որ չափով լինելով պատահական ու անհմաստ, ավելի շատ արցունք ու կական է ծնել, քան ընական, առավել ևս իմաստավորված մահը։ Աստուծոցիները ռազմադաշտում ընկած հայրենավեր մարտիկին անհուսությամբ չէին ողորում, այլ հպարտությամբ ու ակնածանքով էին հրածել տալիս նրան։ «Չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն։ Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում»<sup>55</sup>։

Որպեսզի հանգուցյալի հոգին հանգստանա և ուղևորվի իր մշտական կայանը, որ ըստ հեթանոսների գետնի տակ էր, իսկ քրիստոնյաների կարծիքով՝ երկնքում, հարկ է պատշաճ ծիսակատարություններով հուղարկավորել նրան։ Չավազանց մեծ նշանակություն էր հատկացնում ժողովուրդը ծեսին, այն ուներ (այժմ էլ երբեմն ունի) սովորության ծրագրի ուժ։ «... Եվ հողը նույնիսկ ռավսկան չէր պատերազմի թշվառների դիակները թաղելու, այլ ընկած էին րացօթյա վայրերում անձրևի ու հողմերի, մորիկի դիմաց»<sup>56</sup>։ «Առավել ևս դժնդակ էր նեղությունը նաև այն պատճառով, որ մեջեջյալներին նույնիսկ համարձակորեն լալու և ողորալու հնարավորություն չկար, ոչ էլ իրավունք իրենց տներում սգո հաց կտրելու կամ վախճանալներից գերեզման ղնելու»<sup>57</sup>, - մորմոքում է Ղևոնդ պատմիչը՝ մահացածների նկատմամբ ընդունված արարողության արգելումը եամարելով ողորերգություններից մեծագույնը։

Թաղումով չէր վերջանում մեռյալին մատուցվող տուրքը։ Մահացածին թաղում էին սեվական կալվածքում, մախնիների գերեզմանների մոտ (օրինակ՝ Խոսրով թագավորի մարմինը տարան Դարանաղյաց Անի ամրոցը, ուր նրա պապերի շիրիմներն էին)։ Համոզված էին, որ

մեջեջյալների հոգիները կենդանի են մնում, ապրում են իրենց մախնի մարմիններից ոչ հեռու, և ձգտում էին, որ նրանց հովանավորությունը, պահապան զորությունը լինի կենդանի շառավիղների գլխավերևում։ Նրանց գոհացնելու համար պարրերարար ծեսեր և գոհարերություններ էին կատարվում։ Տիգրան Բ թագավորը իր եղրայր քրմապետ Մաթանի գերեզմանին րագին էր կառուցել և անցորդներին կերակրում էր րագում կենդանիների զոհերով<sup>58</sup>։ «Ողիսակաում» գերեզմանափոսի մոտ հեղում են մախմեղրաջուր, հետո գինի, երրորդ անգամ՝ ջուր, հետո անասուններ են զոհարերում։ «Այնժամ եկան հավաքվեցին հոգիները մեռյալների»<sup>59</sup>։ Անանունը վկայում է, որ Դերենիկի և Սոփիի որդիները իրենց ծնողների հիշատակին մեծ կարողություններ նվիրեցին եկեղեցում<sup>60</sup>։ Կիրակոս Գանձակեցին ռազմաթիվ հիշատակություններ է անում գերեզմանների պաշտամունքի մասին, նրանց ռուժիչ գորության, օգնելու գորեղ ուժի վերարերյալ հավատքի մասին<sup>61</sup>։ Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ հայրենիքի օրհասական պահին մեծամեծերը գնացին, ծնկի եկան հայոց թագավորների գերեզմանների առջև, լաց ու կոծ րարծրացրին և խնդրեցին նրանց օգնությունը<sup>62</sup>։ Համոզված էին, որ համրուրելով սիրելի հանգուցյալի գերեզմանը, նրա հողից թափելով իրենց վրա, սմնդի հետ ընդունելով նրա ոսկորի կամ ուղեղի փշուրները, կրելով նրա անունը, կժառանգեն մահացածի լավագույն հատկանիշները։ Մեծ նշանակություն է տրվում թաղման վայրին, հայրենիքից դուրս թաղվածներին աշխատում էին (և են) երրևե վերադառնել։ Հմարավող էին համարում մարմնի տաղրեր մասեր տարրեր վայրերում թաղելը, ողպեսզի նրա հոգին հավասարապես թևածի այդ վայրերում (օրինակ, Լևոն արքայի թաղման տեղի վերարերյալ երկար վիճելուց հետո, - ինչպես եղավ Աաշտոցի մահ-

<sup>54</sup> Փակտոս Բուզանդ, Եշխ.աշխ., էջ 303:

<sup>55</sup> Եղիշե, Վարդանանց պատմություն, Երևան, 1946, էջ 108:

<sup>56</sup> Ղևոնդ, Եշխ.աշխ., էջ 120:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>58</sup> Մովսես Խորենացի, Եշխ.աշխ., էջ 83:

<sup>59</sup> Հոմերոս, Ողիսական, Երևան, 1988, էջ 165:

<sup>60</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Եշխ.աշխ., էջ 356:

<sup>61</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 53, 135, 160:

<sup>62</sup> Մատթեոս Ուռհայեցի, Եշխ.աշխ., էջ 97:

վան ժամանակ, - որոշեցին մարմինը ամփոփել Սիս մայրաքաղաքում, իսկ սիրտն ու փորոտիքը՝ Սկներ վանքում»<sup>63</sup>:

Պարսից Պերոզ թագավորը սպառնում էր հայերին թույլ չտալ համրուրել Գլուտ կաթողիկոսի կապանքները և երկրպագել նրա ոսկորներին, դա համարելով մեծ պատիժ, քանի որ հայերը մեռածներին ավելի մեծ պատվի են արժանացնում, քան ողջերին<sup>64</sup>: Երբ պարսիկները կողոպտեցին հայոց Արշակունի թագավորների շիրիմները և գերեցին նրանց ոսկորները, Վասակ Մամիկոնյանը անմիջապես արշավեց և մեծ դժվարությամբ ետ խլեց դրանք՝ վախենալով, որ պարսիկները կտիրեն մեր ժողովրդի գոությանն ու քաջությանը<sup>65</sup>: Նույն այս պարսիկները չկարողացան բանալ հայոց հեթանոս Սանատրուկ թագավորի ամրակուռ շիրիմը, որովհետև իր պատմության բոլոր շրջաններում հայ ժողովուրդը ուրիշ շատ ժողովուրդների նման մտածում էր նախնիների գերեզմանների ամրության մասին: Դեռևս տոհմային հասարակության ժամանակներից մեզ են հասել քարակույտերով ծածկված ամուր դամբարանարկուրներ, իսկ վաղ միջնադարից՝ հաստատուն շիրմաքարեր: Գերեզմանը ամրացնում էին ոչ միայն նրա համար, որ հանգուցյալը չկարողանա դուրս գալ և վնասել ապրողներին, այլև շատ զգուշորեն պահպանում էին՝ ինչպես թանկագին ու նվիրական ամեն ինչ:

Թաղման հեթանոսական հանդեսը, որն իր էական գծերով պահպանվեց մաև քրիստոնեական միջնադարում և որի հիմնական տարրերը գոյատևել են մինչև մեր օրերը, ծիսական մի ամբողջ արարողություն էր, ժողովրդական համադրական արվեստի մի արտահայտություն՝ իր կատարողներով, մասնակիցներով ու դեկավարներով, դիմակներով, թատերային հագուստներով ու վարսերով ծայնարկուներ, գուսաններ, կոծապարուներ: Այն պարունակում էր կազմակերպված յուրօրինակ խմբապարեր

ու մենապարեր. գովք, թախանձանք, զղջման մրմունջներ ու անփարատելի վիշտ արտահայտող մեներգեր, խմբերգեր ու ասերգեր, խոսք ու զրույց, շարժ ու նվագ՝ մերթ տխուր, զթություն շարժող, մերթ ցասկոտ՝ չարին միտող: Սրանց միանում էին ինքնաբերական արյունալի գոհաբերություններն ու մատաղները, լացն ու անհույս հեծեծանքը:

Թաղման ծիսակատարության առաջնահերթ խնդիրներն էին. 1) գոհացնել հանգուցյալի կենդանի հոգուն, 2) շարժել խավարի թագավորության Սպանդարամետ աստծո ողորմությունը, որպեսզի նա ետ ուղարկի մեռյալի հոգին կամ հոգատարությամբ վերաբերվի նրան, 3) դիցապաշտական հմայական գործողություններով վանել չար ուժերը, որոնք շարժում ու կենդանի մարդուն չար կախարդանքով դարձրել են անշունչ ու անգոր դիակ, 4) հրավիրել արևի ուշադրությունը, որպեսզի ամենագուր լուսատուն և կենսասփյուռը հոգա այս աշխարհից հեռացողի համար, 5) արտահայտել մահվան առթիվ առաջացած ցավը, վիշտն ու ողբերգությունը:

«Նրանք, իհարկե, չէին ճանկոտում սեփական երեսները, այդ անում էին «ցտելով» դիմակները, որտեղ համապատասխան արյան շիթեր էին նկարված: Ինչպես և կտրում էին ոչ թե իրենց բնական վարսերը, այլ թելերից ոլորած հյուսերը... Եվ նրանք պատռում էին երկի ոչ իրենց ափսոսա հագուստները, այլ հատուկ կարվածը, սա հատուկ կարատեղում պատռելուց հետո հմարավիր էր վերստին կարել: Այլապես մի ուրիշ մեռելի կոծի համար վարձվելիս նրանք ոչ երես, ոչ շոր, ոչ վարսեր կունենային», - գրում է Վ. Խեչումյանը<sup>66</sup>: Այս կարծիքը ընդհանուր առմամբ ճիշտ է, մասնավոր, որ Զ. Մանդակունին հաստատում է, թե կոծողները հագնում էին սատանայական զգեստ: Սակայն Վ. Խեչումյանը քիչ չափազանցում է թատերայության տեղը թաղման ծեսի արարողակարգում, պնդելով, թե Սովի տիկնոջ և նրա մանուկների դիմակները հագած մարդիկ էին ներ-

<sup>63</sup> *Կիրակոս Փանծակեցի*, նշխ.աշխ., էջ 138:

<sup>64</sup> *Ղազար Փարպեցի*, նշխ.աշխ., էջ 277:

<sup>65</sup> *Կիրակոս Փանծակեցի*, նշխ.աշխ., էջ 138:

<sup>66</sup> *Խեչումյան Վ.*, Կոծի թատերականացված հանդեսներ, «Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1972, № 7:

կայացնում Դերենիկի վոեժը լուծելու ցանկության դրվագը: Հավանական է, որ «դերասան» պահանջվեր միայն հանգուցյալի դերի համար, կենդանի մարդիկ իրենք կառող էին ներկայացնել իրենց և, եթե վարձու ծայնարկուներն ու կոծապարուները խաղում էին, ապա հանգուցյալի հաղազատները անկեղծ էին, ամեն ինչ կատարում էին անաղվեստ ու ընկալաբարձ: Գիշտ է նկատում Հ. Հովհաննիսյանը. «Թաղման արարողությունը հասարակական կենցաղի թատերային դրսևորումներից է: Հնում դա եղել է անհամեմատ թատերային, ընդհանրապես է ոչ որպես թատրոն»<sup>67</sup>: Նույն Մանդակունին նշում է, որ մերկ մարմիններից արյուն էին հոսեցնում: Ընդունելի չէ, մեր կարծիքով, նաև այն տեսակետը, որ հեթանոսական ծեսի անհուսալի լաց ու կոծը արդյունք էր հանդերձյալ կյանքի նկատմամբ հավաստի ռացակայությամբ (Մ. Միսնասարյանց, Վ. Խեչումյան): Այդ հավաստի հիմքերը գտնվում էին մարդկային զոյության խորքերում, ասացինք, որ նույնիսկ քարե դարի մարդը մահացածի հետ թաղում էր նրա ողջ սեփականությունը՝ մյուս աշխարհում օգտագործելու համար: Պարզապես հեթանոս մարդը սովոր էր իր զգացմունքներն արտահայտել ռաց, ազատ ու անկաշկանդ: Դա նրա կեցության սովորական ձևն

էր: Լաց ու կոծի իրական հիմքը հանգուցյալի կտրվածությունն էր և է՝ մերձավորներից, նրա այլ՝ առեղծվածներով լի մութ աշխարհի տեղափոխվելու իրողությունը:

Հեթանոս աստվածներն ավելի պարզ էին ու հասկանալի և մարդկանց առաջարկում էին ավելի կենսարուխ ու ընկալաբարձ: Մարդիկ անում էին համարյա այն, ինչ ուզում էին անել, ինչի նրանց մոլում էին ներքին ուժերն ու ձգտումները: Դժվար էր հրաժարվել դրանցից և չհրաժարվեցին: Քրիստոնեության նվորյալներին ռաժին ընկալվ ծանր ու ծավալուն աշխատանք: Մարդիկ պետք է մոռանային իրենց ներքին մոլումները և վաղվին սյնապես, ինչպես պետք էր, ինչպես ճիշտ էր գտնում մոր աստվածը:

*...եվ այս ամենի՜ց, այսքանի՜ց հետո՝*

*Իրավունք չկար մինչև իսկ ... լալու*<sup>68</sup>:

Ժողովուրդը պահեց իր լալու իրավունքը: Քրիստոնեական եկեղեցական ծեսը համարյա ուներ նույն ընթացությունը. ծայնարկուներին ու կոծադիրներին փոխարինեցին եկեղեցու ապաստվորները իրենց սաղմոսներով ու գանձերով: Միայն թե որոշ չափով սահմանափակվեցին մարմնական ցույցերը, պարային ու թատերական տարրերը:

<sup>67</sup> Հովհաննիսյան Հ., Թատրոնը միջամադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 67:

<sup>68</sup> Սևակ Պ., Մարդը ափի մեջ, Երևան, 1936, էջ 236, եվ այդ մի՝ Մաշտոց անուն: